պանել են իրենց մշակույթի որոշակի հատկանիշները: Անկախ սոցիալական ու տարիքային կազմի մշակույթը ոչ թե ծուլվել, այլ ազդեցություններ է կրել: Երիտասարդությունը գերադասությունը տալիս է ժողովրդական ստեղծագործությանը: Ներկա պայմաններում տեղի է ունենում նոր կենցաղի տեղայնացում, որն արտահայտվում է հագուստի, բնակարանի, ժողովրդական ու պրոֆեսիոնալ արվեստում, թաղման, հարսանեկան և այլ արարողություններում: Աճում է հետաքրքրությունը դեպի գործիքային արվեստը, ինքնագործունեությունը: Առաջնահերթ է դառնում դրամատիկական և պարային արվեստը: Նկատվում է մեծ հետաքրքրություն դեպի հարևան ժողովուրդների մշակույթը:

Առաջնակարգ նշանակություն ունի նաև պարարվեստի, երաժշտության և առհասարակ ինքնագործունեության հետագա զարգացման հարցը:

Վ.Ա.ԱՎԱԳՅԱՆ
ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆԻ ԵՎ ԱՇՏԱՐԱԿԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

1. 1974-1975թթ. գրառվել են բանահյուսական նյութեր Աշտարակի շրջանի Կարբի, Փարպի, Օշական, Ոսկեվազ, Բյուրական, Ուշի, Ուջան և Հոկտեմբերյանի շրջանի Այգեշատ, Մրգաշատ, Բամբակաշատ, Փշատավան, Հոկտեմբեր, Մարգարա գյուղերից:

2. Յուրաքանչյուր շրջանում բանահյուսական ավանդույթները և բանահյուսական նյութերի կենցաղավարումը յուրահատուկ պատկեր ունի: Աշտարակի շրջանում, հատկապես, տարածված են ծիսական ու կենցաղային երգերը և խաղիկները, Հոկտեմբերյանի շրջանում՝ առավելապես բանաձևային փոքր ժանրի ստեղծագործությունները/առած, ասացվածք, օրհնանք, անեծք, աղոթք/:

3. Հատկանշական է, որ երկու շրջաններում էլ հեքիաթը կորցրել է ժանրային նկարագիրը, չունի սյուժետային հետևողական զարգացում և ներկայացնում է այլափոխված վիճակ:

4. Աշտարակի շրջանում ընդհանուր տեղական արարատյան խոսվածքը պահպանվել է Աշտարակ, Օշական, Փարպի, մասամբ նաև Կարբի գյուղերում, իսկ Ոսկեվազ, Ուշի, Ուջան և այլ գյուղերում տիրապետող են Հայաստանի պատմա-ազգագրական տարբեր շրջանների բարբառները ու խոսվածքները:

ՀՍՍՀ ԳԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Հոկտեմբերյանի շրջանում ազգաբնակչությունը միատարր չէ: Նրանց լեզվում նկատելի է պարսկահայերի, Վանի, Մուշի և այլ բարբառների առկայությունը:

Ինչպես Աշտարակի, այնպես էլ Հոկտեմբերյանի շրջանի գյուղերում ավանդական բանահյուսության հետ միասին գրանցված են նոր, խորհրդային շրջանի բանահյուսության նմուշներ, որոնք արտացոլում են գյուղի կյանքում ու կենցաղում կատարված փոփոխությունները:

Մ.Ն.ԱՌԱՋԵԼՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1. Օսմանյան արշավանքների դեմ պայքարած Ղարաբաղի Մելիքության շրջանի ժողովրդա-ազատագրական պայքարն արտացոլվել է բազմաթիվ ավանդություններում, որոնք պատմական աղբյուրների զուգադրությամբ օգնում են պարզելու դեպքերի ու քրոնոլոգիաների հետ կապված մի շարք կարևոր հարցեր /ճակատամարտերի կոնկրետ վայրեր, պայքարի տարածման ոլորտում պաշտպանական միջոցառումներ և այլն/:

2. Հիշյալ ավանդություններում ի հայտ են գալիս ազատագրական պայքարին մասնակցող նշանավոր դեմքերի կյանքի ու գործունեության բազմազան կողմեր ու մանրամասներ, որոնք օգնում են բացահայտելու պատմական աղբյուրներում չլուսաբանված տարբեր հարցեր:

3. Բազմաթիվ տեղավայրերի անունների հետ առնչվող հուշապատում ավանդությունների մեջ պատերազմական ավերածությունների մասին այնպիսի փաստեր են հիշատակվում, որոնք հաճախ բացակայում են պատմական աղբյուրներում: Որոշ ավանդություններում գրեթե առանց չափազանցության ներկայացնում օսմանյան նվաճողների ավերածությունները, որոնք հետևանք էին սուլթանական պետության կիրառած նայրանեղ դաժան քաղաքականության: